

ԿՐԹ ՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՆԿԱՆ

ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ

«Զի՞ խնդրէք զիս. ո՞չ զիտէք եթէ ի տան Հօր
իմոյ պարտ է ինձ լինել»: (Ղուկ. Բ. 41—52),

«Սուրբ Գրքի զազանիքներից մէկն է երեսուն տարուայ այն լռութիւնը, երբ Քրիստոս, մեր Տէրն ապրում է Նազարէթում»: Սա մի ճշմարտութիւն է: Մի որ և է մարդու կենսագրութեան մէջ, մեզ աւելի հետաքրքրում է նրա մանկութեան, պատանեկութեան պատմութիւնը: Իբրեւ երեխայ և պատանի՝ մարդը մեզ է պատկանում, իսկ այրական հասակն առնելուց յետոյ՝ նա աշխարհին է պատկանում: Թէ ի՞նչպէս է եղել մարդ իւր մանկութեան հասակում, մեզ աւելի է դրաւում, քան թէ ի՞նչպէս պէտք է լինի մարդ ապագայում: Նոյն իսկ կարող ենք այստեղ մեր կեանքը համեմատութեան մէջ դնել, որովհետեւ մենք էլ երեխայ ենք եղել: Սակայն Տիրոջ կեանքի նկատմամբ այս սրբութիւնը մնում է մեզ համար ընդ միշտ փակ: Իբրեւ նորածին մանուկ փառք և լոյս իջաւ նրա վերայ: Հրեշտակների և մարդկանց, իմաստունների և ոչ-իմաստունների շրթունքները թանկագին սաղմոսներ երգեցին նրա վերայ: Իսկ դրանից յետոյ սկսւում է երեսուն տարուայ շափ մի խաւար և Նա ապրում է մի յետ ընկած և միևնոյն ժամանակ արհամարհուած քաղաքի մէջ:

Աւանդութիւնը կամենալով այդ պակասը լրացնել, գրի է առնել տուել «Մանկութեան աւետարանը», որը սակայն մեր եկեղեցու մէջ չէ ընդունուած: Որտեղ Ս. Գիրքը լռում է, այնտեղ նա հէնց իւր լռութեամբն է խօսում: Սակայն Ս. Գիրքը մեր Տէր Յիսուսի անցկա-

ցրած այդ երեսուն տարուայ կեանքի մասին առանց տեղեկութիւն տալու չէ թողնում։ Այդ երեսուն տարին, թէպէտ իբրեւ մի փակուած պարտէզ, մի այգի է, այնուամենայնիւ մենք տեսնում ենք նրա մի հատիկ ծաղիկը, որն իւր գեղեցկութեամբը յաղթութեան թագունի է դառնում և իւր հոտը սփռում է իւր շորս կողմը անդադար հազարաւոր տարիների ընթացքում։ Ինչպէս որ հազարաւոր վարդերի թերթիկները քամելով մի կաթիլ վարդաջուր է ստացւում և այս մի կաթիլը պահպանում է վարդի թերթիկների ամբողջ ոյժը, նրանց հոտը, — այդպիսի ոյժ ունի նաև Մանուկ Յիսուսի տաճարում ասած մի հատիկ խօսքը. «Ո՛չ գիտէք, եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել»։ Եւ մեր Տէր Յիսուսի մանկական պատանեկական կեանքի բոլոր թերթիկները քամւում և այդ ոսկեայ մի կաթիլն են տալիս։

Այս խօսքն աւելի մեծ նշանակութիւն ունի, քան մի երեխայի խօսք ունենալ կարող է։ Այդ խօսքը ոչ թէ Յիսուսի կեանքի երկնակամարի վերայ փայլող առաւօտեան աստղն է, այլ նրա ամբողջ կեանքի ուղեցոյցն է։ Այդ խօսքը ցոյց է տալիս թէ մեր Տիրոջ կեանքն ի՞նչ գործի պէտք է նուիրուած լինի, և այդ խօսքը մի մեծ գործ է։ Դա մի հարց է երեխայի, բայց և մի վճիռ է մարդու։ Երբեմն երեխաների մէջ ինչ որ նախազգացողական, մարդարէական մի բան է պատահում, մի խօսք է ասում երեխան, որը նրա հասկացողութիւնից շատ բարձր է լինում, և վերջն այդ խօսքը կատարւում է։ Այսպէս է և այստեղ։ Այդ խօսքն ուղեկցում է մեր Տէր Յիսուսին իւր ամբողջ կեանքի մէջ։

Այստեղ, սակայն, ծնողներին և երեխաներին էլ այդ խօսքով բան է ասւում։ Այսօրուան օրը ոչ մի երեխայ աւելի մեծ բան չի կարող խոստովանուել, քան Մանուկ Յիսուսի ասածները։ Եւ մի երեխայի բերել այդ գիտակցութեան, որ նա ճշմարտապէս ասէ. «Ես պէտք է լինեմ այնտեղ, որ իմ Հօրն է պատկանում», մանկավարժութեան ամենամեծ նպատակը պէտք է լինի։

Մենք տեսնում ենք Քրիստոսի ծնողներին Մանուկ Յիսուսին գրկած ամէն տարի Երուսաղէմ են գնում զատկական տօնը կատարելու համար: Յիսուսի ծնողների համար այդ մի «սովորական, տօնական ճանապարհորդութիւն էր», իսկ Մանուկ Յիսուսի համար՝ «օրէնք կատարել էր»: Մանուկը, իբրեւ օրէնքի որդի տասն երկու երրորդ տարուան մէջ պարտաւոր էր ներկայանալ եկեղեցուն: Եւ այսպէս Նա գնում է տաճար: Ամէն բան կարող էր Նրան իբրեւ երեխայի հետաքրքրել, սակայն Նրա նպատակն ուրիշ էր: «Թռչունը իւր բոյնն է գտել և ծիծեռնակը՝ իւր բոյնը, իսկ քո սեղանները, ո՞վ Տէր Աստուած . . .» Ահա թէ ի՞նչ հարց էր ծագել մանկան սրտի մէջ: Ոչ թէ տաճարի ոսկեայ տանիքը, կամ գեղեցիկ սրահներն էին Նրան գրաւում, այլ այն՝ ինչ որ Նրա մէջը կար, այն խորհրդաւորութիւնը, որ նա իւր մէջ ունէր, ահա այդ էր Նրան գէպ իրեն քաշում: Քրիստոսի ծնողների համար տաճարը մի լոկ սրբութիւն էր, ուր Նրանք երկիւղածութեամբ էին մտնում, իսկ Յիսուսի համար տաճարը մի հայրական տուն էր, ուր Նա ապաւինում և իրեն երջանիկ է զգում: Նրա աչքի առաջից թռչում է ժամանակը, գնում են բոլոր մարդիկ, նոյն իսկ իւր ծնողները: իսկ ինքը մնում է «յնտեղ: Երեք օրից յետոյ ծնողները Նրան գտնում են փարիսեցի գիտնականների մէջ, ոչ թէ կանգնած, այլ նստած, որոնց Նա լսում էր, հարցեր էր տալիս և ինքն էլ պատասխանում էր, իբրեւ մի երեխայ, ժամանակից շուտ զարգացած մի զարմանալի երեխայ: Փարիսեցի գիտնականները, ասում է աւետարանը, «զարմանում էին Նրա խելքի ու տուած պատասխանների վերայ»: Մի որ և է մարդու տուած հարցով ու Նրանից ստացած պատասխանով ճանաչւում է մարդ, թէ ի՞նչպիսի հասկացողութեան, ի՞նչպիսի խելքի տէր է նա: Ո՞ր երեխան իւր ծնողներին այնպիսի մի հարց չէ տուել, որի վերայ մի ամբողջ գիրք կարելի լինէր գրել երեխային բաւարարութիւն տալու համար: Սակայն ի՞նչպիսի հարց պիտի տար Մանուկ Յիսուսը, որ այդ գիտնական-

ները պատասխանել չկարողանային: Նրանք տեսնում էին իրենց առաջ 12 տարեկան մի երեխայի, որ խօսում է աստուածային գործերի մասին, ոչ թէ իբրև մի օտար, իւր համար անհասկանալի բաների մասին, ոչ, այլ որպէս թէ իւր հայրենի հողի վերայ է կանգնած և իւր համար սիրելի ձայներ է լսում: Եւ Նա, իրօք, այնտեղ էր, որն իւր երկնաւոր Հօրն էր պատկանում: Ուստի և զիանա-կանները ստիպուած եղան Նրան հարցնել թէ ո՞վ է Նա և ո՞ւմ Որդին է:

Սակայն Հայր Աստուածը նրանց պատասխանում է մանկան բերանով, իսկ նրանք պատասխանել չէին կարողանում: Հայր Աստուածը տանում է Յիսուսին տաճարի Սրբու թիւն Սրբոցը: Մի անգամ Սիմէօն ծերունին գրկեց Նրան այդտեղ և այսօր Աստուած սրտով ընդունում է Նրան և վկայում. «Դու ես իմ սիրելի Որդին»: Հէնց այն րոպէին, երբ Մանուկ Յիսուսը իւր ներքին այդ զիտակցութեան մասին էր խօսում, թէ ինքն ո՞վ է, յանկարծ ներս են մտնում Նրա ծնողները և զրա-նում Նրան փարիսեցիների մէջ նստած. նրանք մեղմու-թեամբ բարկանալով ասում են. «Որդեակ, այդ ի՞նչ արիր դու մեզ հետ. ահա մենք՝ քո հայրդ և մայրդ երեք օր նեղութիւն քաշելով քեզ փնտրում ենք»: Եւ դրան հե-տևում է, առանց ներողութիւն խնդրելու, հանգստու-թեամբ տուած Մանկան սուրբ պատասխանը. «Ի՞նչ, Դուք ինձ փնտրե՞լ էք: Չգիտէիք, որ ես պէտք է իմ երկ-նաւոր Հօր տանը լինեմ»: Եւ դրանով Յիսուս Մանուկը այն բանի նշանն է տալիս, ինչ որ իրեն մէջ այդ երեք օրը շարունակ աճել, հասունացել էր: Մարդու կեանքի մէջ օրեր են լինում, որոնք Նրան աւելի մեծացնում, խելացի են դարձնում: Այդ օրը նոյնպիսի նշանակութիւն ունի նոյնպէս և Յիսուսի համար: Ծնողները կարծում էին թէ Մանուկը իրենցից առաջ տուն է գնացել, և, իրօք, այդպէս էլ էր: Մանուկը նրանցից առաջ էր գնացել, բայց ոչ թէ երկրաւոր տուն, այլ երկնային հայրենիքը: Այդ պատճառով էլ ծնողները Նրա հետքը կորցրին. «Որովհետեւ

ասած է աւետարանի մէջ, նրանք չէին հասկանում այն, ինչ որ Մանուկը խօսում էր»:

Հէնց այն բոլէից սկսած, երբ սուրբ Մանուկը երկնաւոր Հօր ձեռքն է բռնում, բաց է թողնում իւր երկրաւոր ծնողաց ձեռքը: Մանուկ Յիսուսի ծննդից յետոյ, երբ Մարիամի ու Յովսէփի համար զարմանալի հրաշքներ տեղի ունեցան, 12 տարի էր անցել, նրանք այլ ևս այդպիսի գերբնական բաներ չէին տեսել և ուրեմն Մանուկ Յիսուսի վերայ պէտք է նայէին իբրեւ իրենց սեպհական որդու վերայ: Սակայն՝ «Զգիտէիք»,—խօսքով Նա իւր ծնողներին յիշեցնում է անցեալը, իւր ծնունդն ու այն ժամանակ ասած ու երգուած ամէն բան: Մանուկ Յիսուսն աւելի է զարմանում իւր ծնողների վերայ քան վերջիններս մանկան վերայ, որովհետեւ, ինչ որ Նրա համար բոլորովին հասկանալի է, ծնողների համար անհասկանալի է: Այդ պատճառով էլ Նա իւր ծնողների խօսքին՝ թէ «մենք՝ քո հայրդ մայրդ ցաւելով քեզ փնտրում ենք»,—պատասխանում է՝ «Ես պէտք է իմ Հօր տանը լինեմ», դրանով ցոյց տալով, որ Յովսէփը իւր հայրը չէ: Նրա և Աստուծոյ մէջ մի անմիջական կապ կայ: «Ես պէտք է» ասելով, ցոյց է տալիս, որ Նա այդ իւր երկրաւոր ծնողներից չէ սովորել: Նա չէ ասում, «Ես պէտք է լինէի մեր Հօր տանը, այլ իմ Հօր տանը»: Եւ այդ միջոցին ծնողները կանգնած են տաճարի դաւթում, իսկ ինքը Սրբութիւն Սրբոցում: Մանուկ Յիսուսը կանգնած է տաճարի մէջ իբրեւ Աստուծոյ Որդի, իբրեւ իւր սեպհական տան մէջ՝ այն ժամանակ, երբ ուրիշներն այդտեղ հիւրեր էին: Նա ամէն բան հասկանում էր այնտեղ, որտեղ ուրիշներն ոչինչ չէին հասկանում, և Նա գտել էր այն, ինչ որ ուրիշները կորցրել էին: Այդ պատճառով, այդ ժամը Հայր Աստուծոյ ցանկութեամբ առաջուց արդէն նախագուշակուած էր և Մանուկ Յիսուսի համար պէտք է ուրախութիւն, ցնծութիւն լինէր, իսկ Մարիամի համար սուր, որ Նրա սրտի մէջ պիտի ցցուէր, ինչպէս որ Սիմէօն ծերունին Նրան ասում է: Մանուկ Յիսուսի

երեքօրեայ կորուստը և կրկին գտնելը Մարիամի համար մի մարդարէութիւն էր գալիք այն երեք օրերի, երբ Նա Յիսուսին խաչի վերայից վերցնելով, մեծ կսկիծով պէտք է դերեզմանի մէջ դնէր, թաղէր, և երեք օրից յետոյ փառաւորուէր սուրբ յարութեան օրը:

Մի անգամ ևս դառնանք այդ մեծ խօսքին: «Ես պէտք է լինիմ այնտեղ, որ իմ Հօրն է պատկանում»: «Ես պէտք է»: Ո՛չ թէ արտաքուստ ինձ հրամայում են ուրիշները, ինձ ստիպում են, որ ես լինեմ: Ո՛չ, այլ մի ներքին կարիք ինձ ստիպում է այդ անելու: Հարցրէք ծիծեռնակին, ինչո՞ւ նա ձմեռը մօտենալիս դէպի հարաւ է գնում առանց հրամանի. հարցրէք ծաղկին, ինչո՞ւ նա իւր գլուխը միշտ դէպի արեգակն է ծռում, չէ՞ որ նրանց ոչ ոք չէ հրամայում այդ անելու: «Լինել այնտեղ, որ իմ Հօրս է պատկանում»: Եւ դրանով միմիայն տաճարը չէ իմացւում, օրովհետեւ Յիսուս չէ ասում, ես պէտք է իմ Հօր տանը լինեմ, այլ, ես պէտք է լինեմ այնտեղ, որ իմ Հօրն է պատկանում: Այս մի երկու խօսքը պարզապէս ցոյց են տալիս Նրա ամբողջ կեանքի ուղղութիւնը: Իսկ դրանից մենք սովորում ենք, որ Քրիստոս աշխարհ եկաւ ոչ թէ միայն ուսուցանելու, դրա համար Նա միայն երեք տարի գործ դրեց, այլ Նա եկաւ աշխարհ և երեսուն տարի ցոյց տուեց մարդկանց, թէ ի՞նչպէս պէտք է ապրեն, համբերեն խոնարհ լինին, ինքնուրաց լինին, Աստուծուն և մարդկանց սիրեն:

Գերմ. • Թարգ. • Առսակ վարդապետ.

